

դաւարէն ոչ շատ հեռու: Ներսը, լամբարը կ'առկայծէր եւ Զիւմրիթ պտուկը դրած էր կրակին, կէս դիշերուն գործէն դարձող էրկանը կերակուրը պատ-
րաստելու ետեւէ: Երկար դեգերումներէ վերջ, ստուերը մօտեցած էր լաթէ
այդ տնակին, եւ դռնակէն ներս սողոսկելով՝ խոշոր դաշոյն մըն էր փայլե-
ցուցած: Բէճէպ Չափուչն էր, քիւրտ գործաւորապետը, սարսա՛փը տեղւոյն
ափ մը տարազիր հայութեան:

Մանկամարդ կիներ ժամանակ չէր ունեցած շարժում մը ընելու: Իր դէ-
մը կանգնած կը տեսնէր դարչելի դաղտորս մը՝ որ կ'ասպատակէր — այսպէս
անպատկառ — դէպի սուրբ անտառը Հայ Պատիւին: Որո՞ւ պոռար, ո՞ր լե-
րան ու երկինքին զրկէր բողբոջի իր աղաղակը: Եւ յուզմունքէն դողդոջուն՝
ինկած էր անոր թեւերուն մէջ, կիրքի մծղնէ մկրտութիւններէ անցնելու...:

Վայելքէն արբշիտ՝ Բէճէպ օղիի Վաթրա մը հանեց ծոցէն: Խմեց չնա-
գայլի ծարաւով, եւ շատ չանցած՝ ըմպանակը դատարկեց: Հրէշը կը դարթ-
նուր վերստին մօրուցքի նոպաներով: Յետոյ, առատ թոյնին ազդեցութեանը
տակ՝ քուրջի պէս կը փռուէր գետին, խօր թմբիրի մը անձնատուր:

Ոտքի է Զիւմրիթ, գինովին գլխուն վերեւ արձանացած: Արիւնը քուն-
քերը կը խուժէ եւ փայլակներ կ'անցնին աչքերուն ցանցերէն: Բո՛ւհհ... ճը-
րագը մարած է արդէն, մէջի իւղն ալ պարպուած անոր վրայ, որ ալքուլէն կը
խորդայ տակաւին: Լուցկի մը հագուստներուն, շո՛ւտ... լուցկի մը եւս՝ տա-
ղաւարի քղանցքին...:

Դուրսը համատարած մթութիւն: Եւ աղջամուղջին խորէն՝ ի՛նչ կար-
միր պատկեր սա լաթէ տնակը, բոցերու մէջ ամբողջ:

Ան ո՞վ է որ կը փախչի լոյսերուն առջեւէն, բոպիկ հեւ ի հեւ, հերար-
ձակ: — Վազէ՛, դէպի լեռնէ՛րը վազէ, հերո՛ս աղջիկ. դնա՛ հովերուն ու խա-
ւարին պատմել թէ ինչպէ՛ս աղէկ դիտէ մաքրել Հայուհին՝ իր պատիւին ա-
ղարտը:

«Ամէնուն Տարեցոյցը», 1916 – 1920

ԹԵՂԵՎԻԿ



ՄԵՍԻԱ ԽԱՆՁԱՏԵԱՆ
կամաւոր դէպի Կովկաս,
կամաւոր Հայկական Լեգիոնի
Արարայի նախաւամարտին տասնապետ



Չախէն աշ.—
ԹԱԹԵՂՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱԻԻԹԵԱՆ
ԱԼԷԲՍԱՆ ԳԸԼՊԱՇԵԱՆ



ՃԱՆՕ ԹԻԹԻՆՃԵԱՆ
Կովկասի կամաւոր, Ամերիկայէն



ՍԱՐԳԻՍ ԳԱՐԱՅԵԱՆ
Կովկաս, կամաւորական իւանակ.



ՏԻԳՐԱՆ ԳԱՅՆԱԲԵԱՆ
կամաւոր, սերժանտ
Հայկական Լեգէոնի



ԱԻՅՏԻՍ ԽԱՆՁԱՏԵԱՆ
կամաւոր, տասնապետ, Կիլիկիա,
Թարգման փրանսական իւանակի

Պ. Աւետիս Խանզատեան Հայկական Լեգէոնի. կամաւորներէն էր եւ Փրանսական զինուորական իշխանութեանց հրամանով փոխադրուած է անդլիական բանակը: Չունէր ժամանակ մը՝ որ օգտակար չըլլար իր ազգին. արդէն այժմու ստանձնած ծառայութիւնը ցոյց կու տայ թէ ազգին նուիրուած ըլլալու բուն բաղձանքն է որ զինքը այս կողմերը նետած է Ամերիկայէն:

Ուեէ ջանք չէր խնայեր իր ազգին համար. ան զինուոր ըլլալէ զատ, է՛ր նաեւ եռանդուն գործիչ մը նորակազմ միութիւններու, որոնց հիմնումին մէջ կարեւոր մասնակցութիւն մը ունեցաւ: Հալչպի մէջ Կեսարիոյ Յանձնախումբը, սրարտք կը համարէ այսօր իր խորին շնորհակալութիւնը յայտնել անոր զբուստելի արարքներուն եւ մասնաւորաբար իր մատուցած օգտակար ծառայութիւններուն համար:

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՑ ԿԵՍԱՐԻՈՅ ԵՒ ՇՐՁԱԿԱՅՔԻ
ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻ, (ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՆՆԵՐ)

1919, Հալչպ



Թրքական բանակի սպայ

ԳՐԻԳՈՐ ԿՈՍՏԻԿԵԱՆ.— «Մահ իմացեալ մահ, անմահութիւն է»: Այս է եղած նշանաբանը բոլոր այն ծանօթ եւ անծանօթ հերոսներուն, որոնք վեհագոյն նպատակի մը համար ողջակիզուած են նուիրումի խորանին վրայ: Անոնցմէ մին է Գրիգոր Կոստիկեան:

Տասնըօթը տարեկանին, հաղիւ աւարտած Սերաստիոյ Ռոպէրթ Գոլէճը, ուսուցչական պաշտօնի կը կոչուի Կիրիւնի Ազգային Իշխանութեան կողմէ: Խանդավառութեամբ կ'ընդունի եղած հրաւերը, որովհետեւ իր սիրտին խօսող էր այդ գործը: Ուսուցչական պաշտօնին առընթեր կը զբաղի հասարակական գործերով: Կը կազմակերպէ լսարաններ

եւ դասախօսութիւններ, իր ծննդավայրին մէջ ազգային վերազարթնումի շրջան մը ստեղծելու համար: Իր այս գործունէութիւնը երկար չի տեւեր, որովհետեւ զինուորագրումի կը կանչուի եւ նկատի ունենալով որ չափազանց ուշիմ մէկն էր, կը զրկուի Երզնկայի զինուորական վարժարանը, ուրկէ դուրս կու գայ սպայի աստիճանով եւ կը կարգուի Սերաստիոյ շրջանի հրամանատարին թիկնապահը: Երբ Առաջին Համաշխարհային Պատերազմը կը ծագի, հրամանատարը՝ որ մեծ համակրանք ունէր Գրիգորին հանդէպ կ'ուզէ օղնել անոր, որ կերպով մը հեռանայ Սերաստիոյ շրջանէն, անցնի Պոլիս եւ անկից ալ Եւրոպա: Իր այս գաղափարը կը յայտնէ Գրիգորին, որ առ երեսանց ընդունիլ կը ձեւացնէ եւ անհրաժեշտ թուղթերը առնելէ ետք կը մեկնի անծանօթ ուղղութեամբ: Ան չէր ուզեր լքել ազգային իտէալ եւ ընտանիք ու իր կեանքը փրկել, որովհետեւ իրեն համար աւելի նուիրական էր ազգային պարտականութիւնը քան թէ անձնական անիմատ ապրում մը: Ուստի կ'որոշէ նախ ծննդավայր վերադառնալ տեսնելու համար իր ընտանեկան պարագաները եւ ապա միանալ Փէտայական շարժումին:

Այդ շրջաններուն Մուրատ եւ իր խումբը կը գտնուէին Սերաստիոյ շրջակայքը, ուրեմն կ'որոշէ երթալ անոր մօտ եւ միանալ անոր ղեկավարած Փէտայական շարժումին: Երբ կը ներկայանայ Մուրատին, կ'ընդունուի իր առաջարկը եւ իրեն կը յանձնուի պարենաւորումի պարտականութիւնը, որ այդ օրերուն բռնակցի դժուարին գործն էր: Գրիգոր սիրով կ'ընդունի իրրեւ զինուոր իրեն տրուած պարտականութիւնը եւ դիշեր ու ցերեկ կ'աշխատի Փէտայիներու պարենաւորման գործին: Սակայն երկար չի տեւեր ա'յս, եւ հակառակ միշտ ծպտուած ըլլալուն, կը մատնուի ծանօթներու կողմէ. ձերբակալուելով կը բանտարկուի եւ հարցապնդումի կ'ենթարկուի չարչարանքներու ամենէն ահուկ տեսակներով, աքցանահարում, ծեծ եւ այլ խոշտանդումներ, որպէսզի խոստովանի, թէ ուր են Մուրատ եւ իր Փէտայի ընկերները, բայց ի դուր, հայ մարդու կամքը տեղի չի տար անմարդկային արարքներուն առջեւ եւ Գրիգոր Կոստիկեան՝ հաղիւ 23 դարուններ բոլորած, կ'եր-

Թայ միանալ մեր բազմաթիւ հերոսներու հոյլին: Հայ ժողովուրդի պատմութիւնը հերոսներու եւ նուիրեալներու պատմութիւն է: Ան չմոռնար իր հերոսները:

ԿԱՐՊՕ ԶԱՎՈՒՇ ԽԱՆՁԷՏԵԱՆ .— Երևասարդ տարիքին Կիւրինէն գացած է Սերաստիա եւ Կեսարիա: Ճանչցուած է իրր յեղափոխական եւ բանտարկուած: Զէյթունի 1899-ի կռիւի ժամանակ մեծ քանակութեամբ վառօդ ճամբած է: Բոլորին կողմէ ճանչուած է շատ կտրիւ եւ անձնուրաց հայրենասէր մը:

Երկար ժամանակ ծառայած է որպէս ծխախոտի պաշտօնեայ (Ռեժիիս սեվիս մէմբրի) եւ այդ շրջանին հանրածանօթ դարձած է Կարպօ չափուչ անունով:

Անոր երկու տղայ զաւակները նոյնպէս եղած են ծանօթ անձնաւորութիւններ: Մէկը արհեստով դերձակ ըլլալով, կառավարութեան գործարանի տեսուչ կարգուած է, իրրեւ Յակոբ չափուչ, եւ վայելած է որոշ ազատութիւն: Յետոյ Մարտիլիա գալով այնտեղ մահացած է:

Երկրորդ որդին, Աւետիս, Ամերիկայէն կամաւոր դացած է դէպի Կիւրինիա, Պաղեստին, եւ հարիւրապետ եղած է անգլիական բանակին մէջ, եւ իրը Թարգման շատ օգտակարութիւն ունեցած է իր ազգակիցներուն: Ան եւս ժամանակ մը յետոյ եկած է Մարտիլիա եւ այնտեղ մահացած:

Անոր չորս աղջիկները նոյնպէս եղած են ազգին համար գործողներ: Մէկը՝ տիկին Գուլուստեան՝ Եգիպտոս, տիկին Թօփալեան եւ տիկին Մեծեան Պոսթընի շրջանը, եւ տիկին Միհրանեան Ալպընիի մէջ, աջակցած են թէ եւ կեղեցւոյ եւ թէ ազգային ուրիշ կազմակերպութեանց եւ ձեռնարկներուն:

ՕՀԱՆ ՄԵՏԳՈՒՆԵԱՆ .— Կիւրինի մէջ շատ յայտնի դէմք մըն էր, իրրեւ միակ փաստաբանը քաղաքին: Թէ կառավարական եւ թէ ժողովուրդի բոլոր խտերուն մէջ անոր միջնորդութիւնը կարեւոր դեր կատարած է հայերու եւ տաճիկներու յարաբերութեանց մէջ:

Փոքր հասակին մայրը կորսնցուցած՝ եւ Գոնիա գացած է հօրը քով դերձակութիւն սորվելու: Բայց ուսման վաճառք իր մէջ գորաւոր ըլլալով, տաճիկական դպրոց գացած է եւ թուրքերէնի հմտացած: Կիւրին գալով՝ սկիզբը դերձակութեամբ կը պարապի: Յետոյ իր դպրոցի թուրք ընկերներէն մէկը Կիւրին կու գայ իրր քաղաքապետ եւ իրեն կ'առաջարկէ դերձակութիւնը ձրդել եւ Պէլտիէի (քաղաքապետարանի) քարտուղար ըլլալ: Երկու տարի այս պաշտօնը վարելէն յետոյ, փաստաբանական գործով գրադած է ան, մինչեւ 1915-ի տեղահանութիւնը: Եւ ուրիշ երեւելիներու հետ Սերաստիա տարուելու պատրուակով քաղաքէն դուրս հանուած եւ սպաննուած է: Անոր ութը հոգինոց ընտանիքէն միակ վերապրող զաւակը, Սարգիս Մեծեան, երկար ժամանակ Կիւրինի Հայրենակցական Միութեան գործօն անդամ եղած է: Իր հասակակիցներուն նման, ապրած ըլլալով աղէտի մը ամբողջ ծանրութիւն, ան ո՛չ միայն հայրենակցական, այլ եւ ազգային եւ մշակութային շարժումներուն կը մասնակցի նուիրումով, գոհարեութեամբ, օրինակ դառնալով նոր սերունդին եւ իր զաւակներուն:

ԼԵՒՈՆ ՊԷՇԿԵԹՈՒՐԵԱՆ — Ծնած է Կիւրին 1890-ին, նախակրթութիւնը ստացած է տեղւոյն Աղզային Վարժարանին եւ ատեն մըն ալ Բողոքականաց դպրոցին մէջ: 1908-ի թրքական Սահմանադրութենէն ետք կ'երթայ Իզմիր, իր հօրեղբօր՝ Բրօֆ. Կարապետ Պէշկեթուրեանի մօտ, եւ անոր միջոցով թէ՛ կ'աշխատի եւ թէ՛ կ'ուսանի տեղւոյն Ամերիկեան Գոլէճին մէջ:

1910-ին կ'առնուի թրքական բանակին մէջ, կը մարզուի որպէս ժանտարմա եւ կը ղրկուի պաշտօնավարելու Հոռոս կղզիին վրայ, յունարէն լեզուին ծանօթ ըլլալուն պատճառով: Հոն կը ծառայէ երկու տարի: Միացեալ Նահանգներ կու գայ 1913-ին: Երբ Առաջին Համաշխարհային Պատերազմը կը ծաղի՝ Լեւոն Պէշկեթուրեան կամաւոր կը գրուի Ամերիկեան բանակին մէջ, եւ կը ղրկուի Եւրոպական ռազմաճակատը որպէս թնդանօթածիւղ:

Ան իր կեանքի ամբողջ ընթացքին, իբրեւ գիտակից հայրենասէր, դործօն մասնակցութիւն բերած է ազդային եւ հասարակական բոլոր ձեռնարկներուն եւ շարժումներուն: Եռանդուն անդամ եղած է Ռ. Ազ. Կուսակցութեան, Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութեան, Վարդանանց Ասպետներու Եղբայրակցութեան եւ ուրիշ կազմակերպութեանց, պատասխանատու պաշտօններ վարելով բոլորին մէջ: Իր մասին բաւական տեղեկութիւններ կարելի է գտնել ամերիկահայ մամուլի էջերուն վրայ: Հաւանօրէն ունենայ յուշագրութիւններ: Անոնց հրատարակումը իսկապէս կրնայ հետաքրքրական ըլլալ բազմաթիւ կողմերով: Զեռքի տակ չկրցանք ունենալ իր նկարը:

Ա. ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԿԱՄԱԻՈՐ ԿԻՒՐԻՆՅԻ ՏՂՈՑ ՅԱՆԿԸ

Արեքնաբով Գիգիթեան	Սարգիս Թորոսեան
Ալեքսան Գլապշեան	Սարգիս Պայլայեան
Եղիա Պանտայեան	Սարգիս Վէգիթեան
Թադէոս Մալխասեան	Սարգիս Քէհէեան
Կարապետ Պողոսեան	Սեդրակ Տատուրեան
Յակոբ Ճաննիկեան	Սեդրակ Կէօֆեան
Յակոբ Պոյաքեան	Վաղարշակ Թովալթորոսեան
Յովհաննէս Դաւիթեան	Վարդան Ծառուկեան
Յովսէփ Գալաքեան	Տիրան Ճէմնէմեան

ԱՄԵՐԻԿԱՅԷՆ ԵԿԱԾ ԿԻՒՐԻՆՅԻ ԿԱՄԱԻՈՐՆԵՐ
(Ամէնէն ալ մասնակցած են Արարայի քաղաքամարտին)

Սարգիս Աֆարեան
Տիգրան Գայնաքեան (Սերժան)
Մեսիա Խանդատեան (Տանապետ)
Կարապետ Ճամուղեան
Սարգիս Մարաշեան
Արմենակ Պեկիրճեան
Միհրան Փիլանեան